ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2016 թվականի **թիվ 9** քաղ. Աստանա

**«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտի լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի մասին»**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետին և 12-րդ հոդվածի 2-րդ կետի 22-րդ ենթակետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց**.

1. Ստեղծել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտի լիազորված մարմինների ղեկավարների խորհուրդ՝ որպես Եվրասիական տնտեսական միության օժանդակ մարմին:

2. Հաստատել «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտի լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի մասին» կից ներկայացվող հիմնադրույթը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

**Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝**

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետությունից** | **Բելառուսի Հանրապետությունից** | **Ղազախստանի Հանրապետությունից** | **Ղրղզստանի Հանրապետությունից** | **Ռուսաստանի Դաշնությունից** |

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի 2016 թվականի
մայիսի 31-ի թիվ 9 որոշմամբ

# ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

## «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտի լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի մասին»

### I. Ընդհանուր դրույթներ

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտի լիազորված մարմինների ղեկավարների խորհուրդը (այսուհետ՝ համապատասխանաբար Ղեկավարների խորհուրդ, լիազորված մարմիններ, անդամ պետություններ, Միություն) ստեղծվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հոդվածին համապատասխան (այսուհետ՝ «Միության մասին» պայմանագիր)՝ որպես Միության օժանդակ մարմին՝ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ապահովման ոլորտում անդամ պետությունների կողմից համաձայնեցված կամ համակարգված քաղաքականության իրականացման համար (այսուհետ՝ համաձայնեցված կամ համակարգված քաղաքականություն)։

2. Ղեկավարների խորհուրդն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է «Միության մասին» պայմանագրով, Միության իրավունքը կազմող միջազգային այլ պայմանագրերով և ակտերով, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով, ինչպես նաև՝ սույն Հիմնադրույթով։

## II. Ղեկավարների խորհրդի հիմնական խնդիրները և գործառույթները

3. Ղեկավարների խորհրդի հիմնական խնդիրներն են՝

ա) համակողմանի աջակցություն համաձայնեցված կամ համակարգված քաղաքականության իրականացման հարցում.

բ) բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման հարցերով լիազորված մարմինների փոխգործակցության համակարգում։

4. Ղեկավարների խորհուրդն իրեն վերապահված խնդիրների իրագործման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) մշակում է առաջարկություններ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ապահովման գերակա ուղղությունների վերաբերյալ և իրականացնում է դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում.

բ) տրամադրում է աջակցություն լիազորված մարմինների կողմից հետևյալի մշակման հարցում՝

համաձայնեցված գործողություններ սանիտարահակահամաճարակային միջոցառումներ իրականացնելիս.

համաձայնեցված դիրքորոշում լիազորված մարմինների միջև սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման հարցերի շուրջ տարաձայնություններ առաջանալու դեպքում.

համաձայնեցված դիրքորոշում սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման հարցերի շուրջ՝ միջազգային կազմակերպություններում և երրորդ երկրների իրավասու մարմինների հետ քննարկման համար.

գ) նախապատրաստում է առաջարկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ՝ համաձայնեցված կամ համակարգված քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմների ձևավորում.

բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման ոլորտում անդամ պետությունների օրենսդրության կատարելագործում ու ներդաշնակեցում.

լիազորված մարմինների փոխգործակցության ռազմավարության, ուղղությունների և հեռանկարների սահմանում.

լիազորված մարմինների փոխգործակցության կատարելագործում. բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման նպատակով միջոցառումների ձեռնարկում.

բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման հարցերով լիազորված մարմինների տեղեկատվական փոխգործակցության ապահովում.

դ) կազմակերպում է լիազորված մարմինների կողմից բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման ոլորտում անդամ պետությունների ու միջազգային փորձի ուսումնասիրում.

ե) իրականացնում է այլ գործառույթներ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման ոլորտում՝ համաձայնեցված կամ համակարգված քաղաքականության իրականացման շրջանակներում։

## III. Ղեկավարների խորհրդի իրավունքները

5. Ղեկավարների խորհուրդն իրավունք ունի՝

ա) իրականացնել բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) համար.

բ) փոխգործակցել լիազորված մարմինների, գիտական և կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, անդամ պետությունների գործարար համայնքի, միջազգային կազմակերպությունների և բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ու կենսաբանական անվտանգության ապահովման հարցերով անկախ փորձագետների հետ.

գ) Հանձնաժողով ներկայացնել գիտահետազոտական աշխատանքների թեմաներով առաջարկություններ՝ Հանձնաժողովի գիտահետազոտական աշխատանքների ծրագրում ներառելու համար.

դ) Հանձնաժողով ներկայացնել լիազորված մարմինների համաձայնեցված դիրքորոշումը՝ համաձայնեցված կամ համակարգված քաղաքականության իրականացման շրջանակներում։

## IV. Ղեկավարների խորհրդի կազմը

6. Ղեկավարների խորհրդի կազմը ձևավորվում է լիազորված մարմինների ղեկավարներից և (կամ) անդամ պետությունների գլխավոր պետական սանիտարական բժիշկներից։

Ղեկավարների խորհրդի կազմում ընդգրկվում է սանիտարական միջոցառումների ոլորտում Հանձնաժողովի գործառույթների իրականացումն ապահովող՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամը։

Լիազորված մարմինները Ղեկավարների խորհրդին և Հանձնաժողովին ժամանակին տեղեկացնում են լիազորված մարմինների ղեկավարների և անդամ պետությունների գլխավոր պետական սանիտարական բժիշկների կազմում փոփոխությունների մասին։

7. Ղեկավարների խորհրդի նախագահը նախագահում է Ղեկավարների խորհրդի նիստերին և իրականացնում է Ղեկավարների խորհրդի աշխատանքի ընդհանուր ղեկավարումը։

Ղեկավարների խորհրդի նախագահն ընտրվում է ուղիղ բաց քվեարկությամբ՝ Ղեկավարների խորհրդի նիստի ժամանակ՝ Միության մարմիններում նախագահող անդամ պետության Ղեկավարների խորհրդի անդամներից՝ «Միության մասին» պայմանագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան։

8. Ղեկավարների խորհրդի նախագահը՝

ա) ղեկավարում է Ղեկավարների խորհրդի աշխատանքը.

բ) համաձայնեցնում և հաստատում է Ղեկավարների խորհրդի նիստի օրակարգը, որոշում է դրա անցկացման ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) վարում է Ղեկավարների խորհրդի նիստերը.

դ) ստորագրում է Ղեկավարների խորհրդի նիստերի արձանագրությունները։

9. Ղեկավարների խորհրդի նախագահի հրավերով՝ Ղեկավարների խորհրդի նիստին կարող են մասնակցել Հանձնաժողովի այն պաշտոնատար անձինք և աշխատակիցները, որոնց իրավասության շրջանակներում են Ղեկավարների խորհրդի նիստում քննարկվող հարցերը, լիազորված մարմինների, գիտական և կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, անդամ պետությունների գործարար համայնքի, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները և անկախ փորձագետներ (այսուհետ՝ Ղեկավարների խորհրդի նիստի մասնակիցներ)։

10. Ղեկավարների խորհրդի պատասխանատու քարտուղարը նշանակվում է Ղեկավարների խորհրդի նախագահի կողմից՝ լիազորված մարմինների աշխատակիցներից, պաշտոնատար անձանցից կամ Հանձնաժողովի աշխատակիցներից։

11. Ղեկավարների խորհրդի պատասխանատու քարտուղարը՝

ա) պատրաստում է Ղեկավարների խորհրդի նիստի օրակարգի նախագիծը և այն ներկայացնում է Խորհրդի նախագահի հաստատմանը.

բ) Ղեկավարների խորհրդի անդամներին և Ղեկավարների խորհրդի նիստի մասնակիցներին ուղարկում է Ղեկավարների խորհրդի նիստի հաստատված օրակարգը և դրան կից նյութերը.

գ) Ղեկավարների խորհրդի անդամներին և Ղեկավարների խորհրդի նիստի մասնակիցներին տեղեկացնում է Ղեկավարների խորհրդի հերթական նիստի անցկացման ամսաթվի, ժամի և վայրի մասին.

դ) վարում է Ղեկավարների խորհրդի նիստի արձանագրությունը և այն ներկայացնում Ղեկավարների խորհրդի նախագահի ստորագրմանը.

ե) Ղեկավարների խորհրդի անդամներին ուղարկում է Ղեկավարների խորհրդի նիստերի արձանագրությունների պատճենները.

զ) իրականացնում է Ղեկավարների խորհրդի նիստի արձանագրությամբ նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ աշխատանքների կատարման դիտանցում և Ղեկավարների խորհրդի նախագահին տեղեկացնում դրա արդյունքների մասին։

## V. Ղեկավարների խորհրդի աշխատակարգը

12. Ղեկավարների խորհրդի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարին երկու անգամ։

13. Ղեկավարների խորհրդի նիստի անցկացման մասին որոշումն ընդունվում է Ղեկավարների խորհրդի նախագահի կողմից։

14. Ղեկավարների խորհրդի նիստի օրակարգի նախագծի կազմման վերաբերյալ առաջարկությունները Ղեկավարների խորհրդի անդամների կողմից ուղարկվում են Ղեկավարների խորհրդի նախագահին։

15. Ղեկավարների խորհրդի նիստի օրակարգին կից նյութերը ներառում են՝

ա) քննարկվող հարցերին առնչվող տեղեկանքներ.

բ) քննարկմանն առաջարկվող փաստաթղթերի նախագծեր (առկայության դեպքում).

գ) քննարկվող հարցերին առնչվող արձանագրային գրությունների նախագծեր.

դ) անհրաժեշտ տեղեկատվական եւ վերլուծական նյութերը։

16. Ղեկավարների խորհրդի պատասխանատու քարտուղարը Ղեկավարների խորհրդի անդամներին և Ղեկավարների խորհրդի նիստի մասնակիցներին ուղարկում է Ղեկավարների խորհրդի նիստի հաստատված օրակարգը և դրան կից նյութերը, այդ թվում նաև՝ էլեկտրոնային տարբերակով, ոչ ուշ, քան Ղեկավարների խորհրդի նիստի անցկացման օրվանից 20 օրացուցային օր առաջ, իսկ բացառիկ դեպքերում՝ Ղեկավարների խորհրդի նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ։

17. Ղեկավարների խորհրդի նիստերը, որպես կանոն, անցկացվում են Հանձնաժողովի շինություններում։

Ղեկավարների խորհրդի նիստը կարող է անցկացվել ցանկացած անդամ պետությունում՝ լիազորված մարմինների առաջարկությունների հիման վրա ընդունված՝ Ղեկավարների խորհրդի նախագահի որոշմամբ։ Այս դեպքում ընդունող անդամ պետությունը աջակցություն է տրամադրում Ղեկավարների խորհրդի նիստի կազմակերպման և անցկացման հարցում։

Ղեկավարների խորհրդի նախագահի որոշմամբ՝ Ղեկավարների խորհրդի նիստը կարող է անցկացվել տեսաժողովի ռեժիմով։

18. Ղեկավարների խորհրդի նիստն իրավազոր է համարվում, եթե նիստին յուրաքանչյուր անդամ պետությունից ներկա է Ղեկավարների խորհրդի առնվազն մեկական անդամ։

Ղեկավարների խորհրդի անդամները Ղեկավարների խորհրդի նիստերին մասնակցում են անձամբ՝ առանց փոխարինման իրավունքի։

Ղեկավարների խորհրդի նիստին մասնակցելու անհնարինության դեպքում Ղեկավարների խորհրդի անդամն իրավունք ունի քննարկվող հարցերի վերաբերյալ իր կարծիքը նախօրոք, գրավոր ներկայացնելու Ղեկավարների խորհրդի նախագահին։

19. Ղեկավարների խորհրդի անդամները Ղեկավարների խորհրդի նիստին քննարկման համար կարող են առաջարկել լրացուցիչ հարցեր, որոնք ներառված չեն Ղեկավարների խորհրդի նիստի հաստատված օրակարգում։

Ղեկավարների խորհրդի նիստի օրակարգում լրացուցիչ հարցերի ներառման մասին որոշումն ընդունում է Ղեկավարների խորհրդի նախագահը՝ Ղեկավարների խորհրդի անդամների հետ համաձայնեցմամբ։

20. Ղեկավարների խորհրդի նիստի օրակարգում ներառված հարցը քննարկումից կարող է հանվել Ղեկավարների խորհրդի նախագահի կողմից՝ Ղեկավարների խորհրդի անդամների առաջարկություններով։

21. Ղեկավարների խորհրդի նիստի օրակարգում ներառելու համար հարցեր առաջարկող Ղեկավարների խորհրդի անդամներն ապահովում են առաջարկված հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերի և տեղեկատվության տրամադրումը Ղեկավարների խորհրդի պատասխանատու քարտուղարին։

Ղեկավարների խորհրդի նախագահն իրավունք ունի լիազորված մարմիններից և Ղեկավարների խորհրդի անդամներից սահմանված կարգով պահանջելու Ղեկավարների խորհրդի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ նյութեր և տեղեկատվություն։

22. Ղեկավարների խորհրդի նիստի ընթացքում հարցերի քննարկման ժամանակ Ղեկավարների խորհրդի անդամներն ունեն հավասար իրավունքներ։

Ղեկավարների խորհրդի նիստի արդյունքները ձևակերպվում են արձանագրությամբ, որում նշվում են Ղեկավարների խորհրդի անդամների դիրքորոշումները։ Ղեկավարների խորհրդի նիստերին Ղեկավարների խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկությունները չեն կարող դիտարկվել որպես անդամ պետությունների վերջնական դիրքորոշում։

Ղեկավարների խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրվում է Ղեկավարների խորհրդի նախագահի կողմից, որպես կանոն, Ղեկավարների խորհրդի նիստի անցկացման օրը, իսկ բացառիկ դեպքերում՝ Ղեկավարների խորհրդի նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում։

Ղեկավարների խորհրդի պատասխանատու քարտուղարը Ղեկավարների խորհրդի նիստի արձանագրության պատճեններն ուղարկում է Ղեկավարների խորհրդի բոլոր անդամներին՝ Ղեկավարների խորհրդի նախագահի կողմից այն ստորագրելու օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում։

Ղեկավարների խորհրդի նախագահի որոշմամբ՝ Ղեկավարների խորհրդի նիստի արձանագրության պատճենները կամ դրանից քաղվածքը կարող են ուղարկվել Ղեկավարների խորհրդի նիստի մասնակիցներին։

Ղեկավարների խորհրդի նիստերի արձանագրությունները պահվում են Ղեկավարների խորհրդի պատասխանատու քարտուղարի մոտ, իսկ այդ արձանագրությունների պատճենները՝ Հանձնաժողովում։

23. Ղեկավարների խորհրդի աշխատանքներին Ղեկավարների խորհրդի անդամների և լիազորված մարմինների մասնակցության հետ կապված ծախսերը հոգում են նրանց ուղարկող անդամ պետությունները։

Ղեկավարների խորհրդի աշխատանքներին գիտական և կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, անդամ պետությունների գործարար համայնքի, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և անկախ փորձագետների մասնակցության հետ կապված ծախսերը նշված անձինք հոգում են ինքնուրույն։

Ղեկավարների խորհրդի աշխատանքներին Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, պաշտոնատար անձանց և Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցության հետ կապված ծախսերը հոգում է Հանձնաժողովը։

24. Ղեկավարների խորհրդի գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից։